ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....2

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....2

ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ.....8

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ.....10

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. <<Յունիբանկ>> բաց բաժնետիրական ընկերության Խորհրդի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանվում են <<Յունիբանկ>> ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) խորհրդի կազմը, ընտրությունները, իրավասությունները, նիստերի գումարման, անցկացման կարգը և այլն:

1.2. Սույն Կանոնակարգը մշակված է ՀՀ գործող օրենսդրության, Բանկի Կանոնադրության պահանջներին համաձայն:

1.3. Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և Բանկի կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Բանկում վարվում է Խորհրդի անդամների ռեեստր, որի պատասխանատուն Բանկի Աշխատակազմն է:

2.2 Խորհրդի անդամ կարող են լինել, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող գործունակ անձինք, որոնք բավարարում են ՀՀ օրենքներով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին:

2.3 Բանկի բաժնետեր չհանդիսացող անձինք ևս կարող են ընտրվել Խորհրդի անդամ:

2.4 Խորհրդի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք: Խորհրդի և Վարչության անդամները ևս չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

2.5 Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կողմից, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովի կողմից՝ ձայների 3/4-ով, ոչ պակաս քան մեկ տարի պաշտոնավարման ժամկետով: Խորհրդի անդամի լիազորությունների ընդհանուր ժամկետը չի սահմանափակվում:

2.6 Ժողովին Բանկի Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Խորհուրդը և Բանկի մասնակիցները:

2.7 Բանկի բաժնետերերն իրենց կողմից Խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրելու դեպքում այդ մասին գրավոր հայտնում են Բանկի Խորհրդի նախագահին տարեկան ժողովի, ինչպես նաև արտահերթ ժողովի (եթե արտահերթ ժողովի օրակարգում ընդգրկված է Խորհրդի անդամ(ներ)ի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարց) մասին ծանուցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Առաջարկվող թեկնածուների թիվը չի կարող գերազանցել Խորհրդի անդամների սահմանված թիվը:

2.8 Խորհրդի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, այդ թվում՝ ինքնաառաջադրման դեպքում, գրավոր առաջարկում նշվում է թեկնածուի անունը, նրա՝ Բանկի բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը, նրան պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը, նրան առաջադրող Բանկի բաժնետիրոջ/բաժնետերերի/անունը/անվանումը/,վերջինիս պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը:

2.9 Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին Բանկի կանոնադրությամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է որոշում ընդունել թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝

ա) առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ /բաժնետերերի/ կողմից խախտվել է կանոնադրությամբ սահմանված ժամկետը,

բ) լրիվ չեն կամ բացակայում են սույն կետով սահմանված տվյալները,

գ) առաջարկը հակասում է ՀՀ օրենսդրության, Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին:

2.10 Խորհուրդն իր կողմից խորհրդի անդամության թեկնածու առաջադրում է Բանկի ժողովի օրակարգում ընդգրկելու միջոցով:

Բանկի մասնակից(ները), որը/որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում է/են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունի/ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում, կամ դրանում նշանակելու իր/իրենց ներկայացուցչին: Նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը Խորհրդում հնարավոր է միայն Բանկի մասնակիցների խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ Ժողովին տեղեկացնելու դեպքում: Այդ պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

ա) Բանկի միավորվող մասնակիցների վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը,

բ) միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ <<Բանկերի և բանկային գործունեության մասին>> ՀՀ օրենքի 43 հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկությունները,

գ) պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ,

դ) միավորվող մասնակիցների հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

2.11 Պայմանագրի պատճենները տրամադրվում են ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

2.12 Խորհրդի կազմում կարող է ընդգրկվել առավելագույնը 9 անդամ:

2.13 Խորհրդի անդամները վարձատրվում են:

2.14 Եթե Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցվում է: Բանկն իրավունք ունի Խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման մեջ Խորհրդի անդամի թերանալու փաստը:

սահմանափակ

2.15 Խորհրդի անդամը պարտավոր է Խորհրդին և Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին տրամադրել օրենքով սահմանված տեղեկություններ Բանկի գործարքներում իր շահագրգռվածության, Բանկի հետ գործարք իրականացնող անձանց հետ իր փոխկապակցվածության մասին:

2.16 Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր (10%-ից պակաս) մասնակցություն ունեցող մասնակիցներն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Խորհրդի կազմում: Փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և ընդգրկվի Խորհրդի կազմում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության: Փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն ընդհանուր ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ: Բանկի փոքր մասնակիցները ծանուցվում են Բանկի Խորհրդի կողմից իրենց փոքր մասնակցի կարգավիճակ ձեռք բերելու մասին Ժողովի համար ծանուցման կարգով՝ սույն մասով սահմանված պայմանագիրը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում: Ծանուցվելուց հետո փոքր մասնակիցները առաջադրում են Խորհրդի անդամի իրենց թեկնածուին: Համաձայնության չգալու դեպքում Ժողովի անցկացման օրը փոքր մասնակիցները փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում են Խորհրդի անդամի թեկնածու՝ իրենց կողմից առաջադրված թեկնածուների թվից: Քվեարկությունը կազմակերպվում և անցկացվում է Բանկի Խորհրդի նախագահի կամ նրա նշած Խորհրդի անդամի կողմից: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների առաջադրած ներկայացուցչի մասին տեղեկատվությունը Խորհրդի կողմից ներկայացվում է ընդհանուր ժողովին՝ կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

2.17 **<u>Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝</u>**

2.17.1 որոշել Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, հաստատել Բանկի զարգացման ծրագրերը, Բանկի ֆինանսական առողջացման ծրագրերը, Կենտրոնական բանկի հետ կնքել պայմանագրեր բանկային օրենսդրության, տնտեսական նորմատիվների խախտումների վերացման վերաբերյալ,

2.17.2 հաստատել Բանկի տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները,

2.17.3 որոշում ընդունել Բանկի տարածքային ստորաբաժանումների ստեղծման և լուծարման մասին:

2.17.4 որոշում ընդունել դուստր ընկերությունների ստեղծման, նրանց և այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցության չափի մասին,

2.17.5 որոշումներ ընդունել Կենտրոնական բանկի կողմից Բանկին տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ,

2.17.6 գումարել Բանկի տարեկան և արտահերթ ժողով,

2.17.7 հաստատել ժողովի օրակարգը,

2.17.8 լուծել ժողովի նախապատրաստման և գումարման հետ կապված հարցերը, այդ թվում՝

սահմանել ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը,

2.17.9 Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը,

2.17.10 նշանակել Բանկի Վարչության նախագահին, անդամներին՝ Վարչության նախագահի ներկայացմամբ, վաղաժամկետ դադարեցնել նրանց լիազորությունները և հաստատել վարձատրության պայմանները,

2.17.11 սահմանել Բանկի ներքին հսկողության ստանդարտները, ձևավորել ներքին աուդիտի ստորաբաժանումը, վաղաժամկետ դադարեցնել ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունները, հաստատել նրանց տարեկան աշխատանքային ծրագիրը և վարձատրության պայմանները,

2.17.12 ստեղծել Բանկի Վարչություն, հաստատել Վարչության կազմը, խնդիրները, նիստերի գումարման և անցկացման, որոշումներ ընդունելու կարգը, հաստատել Վարչության գործունեության աշխատակարգը,

2.17.13 Ժողովի հաստատմանը ներկայացնել Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին,

2.17.14 սահմանել Բանկի արտաքին աուդիտն անցկացնող անձի վարձատրության չափը,

2.17.15 ցանկացած ժամանակ հրավիրել արտաքին աուդիտ ՝ Բանկի միջոցների հաշվին,

2.17.16 սահմանել վարկավորման, ֆինանսավորման, դրամարկղային սպասարկման, տնտեսական գործունեության, արժեթղթերով գործառնությունների կատարման պայմաններն ու կարգը,

2.17.17 Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նկատմամբ վերահսկողություն,

2.17.18 քննարկել վերստուգումների, ստուգումների նյութերը, տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,

2.17.19 հաստատել Բանկի տարեկան ծախսերի նախահաշիվը և կատարողականը,

2.17.20 Բանկի գույքի շուկայական արժեքի սահմանումը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից: Գույքի շուկայական արժեքը որոշելիս՝ անկախ գնահատողի ծառայություններից օգտվելու վերաբերյալ որոշման կայացումը: Շահագրգիռ գործարքներում գույքի շուկայական արժեքը սահմանվում է Խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում,

2.17.21 միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի, վճարման ձևի և վճարման ժամանակացույցի սահմանում: Տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ հանդես գալ առաջարկությամբ, Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովում, շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակի կազմում,

2.17.22 սահմանել Բանկի պահուստային հիմնադրամի և այլ ֆոնդերի օգտագործման կարգը,

2.17.23 որոշում ընդունել Բանկի պարտապանների պարտավորության վրա տոկոսների հաշվարկի դադարեցման, պարտքերի զեղչման կամ ներման մասին, կամ հաստատել Վարչության նախագահի/Պահուստների կառավարման հանձնաժողովի կողմից հիշյալ հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու կարգը,

2.17.24 որոշում է ընդունում շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու վերաբերյալ՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, Խորհրդի բոլոր անդամների շահագրգիռ ճանաչվելու դեպքում որոշումն ընդունում է ընդհանուր ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող մասնակիցների ձայների մեծամասնությամբ,

2.17.25 համաձայնություն տալ Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքմանը (եթե գույքի արժեքը կազմում է բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50%-ը որոշումն ընդունվում է միաձայն),

2.17.26 որոշում ընդունել Բանկի հայտարարված բաժնետոմսերի կամ դրանց մի մասի թողարկման մասին, սահմանել բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը և պայմանները,

2.17.27 որոշում ընդունել Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման մասին, սահմանել դրանց տեղաբաշխման և մարման կարգը և պայմանները,

2.17.28 օրենքով նախատեսված դեպքերում ձեռք բերել Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերը, պարտատոմսերը և այլ արժեթղթերը,

2.17.29 հաստատել ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը և ֆինանսական գործառնություններ կանոնակարգող փաստաթղթերը,

2.17.30 հաստատել Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը և աշխատատեղերը (հաստիքացուցակը),

2.17.31 քննարկել Բանկի Վարչության, ներքին աուդիտի ստորաբաժանման, գլխավոր հաշվապահի ներկայացրած հաշվետվությունները և ընդունել որոշումներ, իրականացնել օրենքով և սույն կանոնադրությամբ Խորհրդին վերապահված այլ լիազորություններ,

2.17.32 սահմանել Բանկի Խորհրդի անդամների վարձատրության չափը,

2.17.33 սահմանել ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատության՝ ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի քաղաքականությունը ,

2.17.34 հաստատել Ներքին դիտարկումների մարմնի և ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ներքին աուդիտի տարեկան ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները, ինչպես նաև վերահսկողություն իրականացնել այդ ծրագրերի իրականացման նկատմամբ,

2.17.35 անհրաժեշտության դեպքում նախաձեռնել ՓԼ/ԱՖ կանխարգելման դիտարկումների մարմնի ուսումնասիրությունները, հաստատել աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկել դրանց իրականացումը,

2.17.36 հաստատել ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտերը,

2.17.37 ստանալ և քննարկել ներքին դիտարկումների մարմնի և /կամ Ներքին աուդիտի

հաշվետվությունների ներքին իրավական ակտերի կատարման վիճակի մասին իր կողմից սահմանված հաճախականությամբ,

2.17.38 հաստատել ներքին դիտարկումների մարմնի կողմից կառավարման բարձրագույն մարմնին՝ Խորհրդին ներկայացվող հաշվետվությունները,

2.17.39 հսկել ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին համակարգի արդյունավետության ուսումնասիրության իրականացումը,

2.17.40 Բանկի բաժնետոմսերի բաժանորդագրություն իրականացնելու դեպքում հաստատել դրանց տեղաբաշխման **ազդագիրը:**

2.18 2.17 կետով սահմանված լիազորությունները, բացառությամբ 2.17.30 ենթակետով սահմանված աշխատատեղերի հաստատման իրավասության, Խորհրդի բացառիկ իրավասությանը ենթակա հարցեր են և չեն կարող փոխանցվել Բանկի Վարչությանը:

2.19 Խորհուրդը պարտավոր է քննարկել և Բանկի կանոնադրությամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում ընդունել որոշում՝ Բանկի ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի կողմից, Բանկի տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ:

2.20 Խորհրդի հիմնավորված որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին, ուղարկվում է առաջարկը ներկայացրած բաժնետիրոջը կամ բաժնետերերին՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում:

2.21 Խորհրդի որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին, կարող է բողոքարկվել դատական կարգով:

2.22 Առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդն իր նիստում քննարկում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկում և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը:

2.23 Վերոհիշյալ հարցերի վերաբերյալ Խորհրդի նիստին կարող են ներկա գտնվել նաև Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Բանկում գործող բոլոր հանձաժողովների ղեկավարները, որոնք իրենց առաջարկություններն են ներկայացնում Բանկի ռազմավարության, հաճախորդների սպասարկման բարելավման, Բանկի կառավարման ոլորտի այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

2.24 Առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհուրդը քննարկում է Ներքին աուդիտի ստորաբաժանման, Վարչության ներկայացրած հաշվետվությունները:

2.25 Հաշվետվությունները ներկայացվում են սույն Կանոնակարգով և Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

2.26 Բանկի Վարչության անդամների և Ներքին դիտարկումների մարմնի կողմից այլ վճարովի աշխատանք /բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից/ կատարելու դեպքում պահանջվում է Խորհրդի համաձայնությունը:

2.27 Խորհրդի կողմից ընդհանուր ժողովի քննարկմանն են ներկայացվում Բանկի

վերակազմակերպման և Օրենքով սահմանված այլ հարցեր:

2.28 Բանկի Խորհրդի նախագահը. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կազմից, վերընտրվում և ազատվում է Խորհրդի անդամների կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նախագահի և Վարչության նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

2.29 Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
բ) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,
գ) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը,
դ) նախագահում է Ընդհանուր ժողովում կամ նշանակում է Ժողովի նախագահող,
ե) ստորագրում է Ժողովի և Խորհրդի ընդունած որոշումները, դրանցով հաստատված փաստաթղթերը,
զ) կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը,
է) Բանկի Վարչության նախագահի և անդամների հետ կնքում է աշխատանքային պայմանագրեր:

2.30 Խորհրդի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ

3.1 Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ իր, Բանկի Խորհրդի անդամի, արտաքին աուդիտն իրականացնող անձի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Կենտրոնական բանկի խորհրդի, Բանկի վարչության նախագահի կամ Վարչության, Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի/մասնակիցների/ գրավոր պահանջով:

3.2 Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Բանկի կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և <<Յունիբանկ>> ԲԲԸ <<Աշխատակազմի կանոնակարգ>>-ով:

3.3 Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

3.4 Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ Խորհրդի նիստի մասնակիցները համատեղ ներկա են, կամ քվեարկությունը կարող է անցկացվել հեռակա կարգով՝ հարցման միջոցով, կամ մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում (նման նիստը հեռակա կարգով անցկացված նիստ չի համարվում):

3.5 Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, որը ստորագրում է նիստի որոշումները:

3.6 Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:

3.7 Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի լիազորումը Խորհրդի այլ անդամի արգելված է և իրավական ուժ չունի:

3.8 Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

3.9 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո 10-օրյա ժամկետում:

3.10 Խորհրդի նիստի արձանագրության մեջ նշվում են՝

- նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, վայրը,
- նիստին մասնակցած անձինք,
- նիստի օրակարգը,
- օրակարգի հարցերի վերաբերյալ Խորհրդի անդամների և Խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները,
- նիստում ընդունված որոշումները:

3.11 Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են Խորհրդի նախագահը, նիստին մասնակցող Խորհրդի բոլոր անդամները, նիստի քարտուղարը, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

3.12 Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի Վարչության նախագահի պարտադիր մասնակցությամբ՝ բացառությամբ Բանկի Վարչության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի Վարչության նախագահը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

3.13 3.13. Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով: <<Բանկերի և բանկային գործունեության մասին>> ՀՀ գրենքի 21.6 հոդվածի առաջին մասի <<գ>>, <<դ>>, <<ժ>> եւ <<ժդ>> կետերում նշված, ինչպես նաև բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, բանկի խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել բանկի Խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:

Խորհրդի նիստերը հեռակա կարգով գումարելու դեպքում, Բանկի Աշխատակազմի ղեկավարը Խորհրդի նիստի գումարումից առնվազն 5 օր առաջ Խորհրդի անդամներին է տրամադրում քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ նյութերը և դրանց որոշումների նախագծերը հեռակա քվեարկության քվեաթերթիկի տեսքով (քվեաթերթիկի ձևը կցվում է):

Նյութերը կարող են տրամադրվել առձեռն, էլեկտրոնային փոստի, ֆաքսի և հեռահաղորդակցության այլ միջոցներով:

Խորհրդի անդամները քվեարկում են <<Կողմ>>, <<Դեմ>> կամ <<Ձեռնպահ>> բառերից որևէ մեկի դիմաց համապատասխան նշում կատարելու և քվեաթերթիկը ստորագրելու միջոցով: Խորհրդի անդամների կողմից լրացված (քվեարկված) քվեաթերթիկները Խորհրդի գումարման օրվանից 3 օրվա ընթացքում կարող են ուղարկվել Բանկի իրավաբանական հասցեով՝ պատվիրված նամակով, առձեռն, էլեկտրոնային փոստի, ֆաքսի և հեռահաղորդակցության այլ միջոցներով: Հեռակա կարգով գումարվող Խորհրդի նիստերի փաստաթղթաշրջանառությունը կարող է կազմակերպվել նաև Բանկի՝\ Մոսկվա քաղաքում ներկայացուցչության միջոցով:

Քվեաթերթիկների միջոցով քվեարկության դեպքում ձայները հաշվարկվում են այն հարցերի մասով, որոնցով քվեարկողի կողմից նշվել է քվեարկության հնարավոր տարբերակներից միայն մեկը: Քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները, որոնք լրացված չեն կամ լրացված

են նշված պահանջի խախտմամբ, համարվում են անվավեր և այդ հարցերի մասով ձայները չեն հաշվարկվում: Այն դեպքում, երբ քվեաթերթիկը պարունակում է մի քանի հարցեր, նշված պահանջի խախտումը մեկ կամ մի քանի հարցերի նկատմամբ չի հանգեցնում ամբողջ քվեաթերթիկի անվավեր ճանաչմանը: Քվեաթերթիկը 1-ից ավելի էջ ունենալու դեպքում Խորհրդի անդամի կողմից ստորագրվում է յուրաքանչյուր էջի վրա:

Բանկի Աշխատակազմի ղեկավարը քվեաթերթիկները ստանալուց հետո 2 օրվա ընթացքում ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում է արձանագրություն: Հեռակա քվեարկությամբ որոշումը համարվում է ընդունված, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված տվյալ որոշման ընդունման համար բավարար <<Կողմ>> ձայներ հավաքելու դեպքում:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

4.1 Բանկի Խորհուրդն իր աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ:

4.2 Բանկի Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Բանկի Խորհրդի անդամները, Բանկի Վարչության անդամները կամ այլ աշխատակիցներ:

4.3 Բանկի Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

4.4 Բանկի Խորհրդին կից հանձնաժողովների նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ: